ԿԱՐԾԻՔ

Լուսինե Սիմոնի Մինասյանի «Անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի հիմնահարցերը. համեմատական իրավական վերլուծություն» թեմայով ԺԲ.00.02 «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Լ. Մինասյանի «Անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի հիմնահարցերը. համեմատական իրավական վերլուծություն» թեմայով ատենախոսությունը նվիրված է մարդու անձնական տվյալների պաշտպանության իրավունքի էությանն ու սահմանադրաիրավական բովանդակությանը, անձնական տվյալների պաշտպանության իրավունքի՝ որպես առանձին սահմանադրաիրավական ինստիտուտի ճանաչման, երաշխավորման ու ապահովման հիմնախնդրի՝ բացահայտման այդ իրավունքի տեղին ու դերին, մարդու սահմանադրական մյուս իրավունքների համատեքստում, հեղինակն անդրադարձել է նաև անձնական տվյալների պաշտպանության իրավունքի ծագման և զարգացման պատմական գործընթացին:

Ներկայացված ատենախոսության թեման խիստ արդիական է ոչ միայն հետազոտվող նյութի ընդհանուր տեսական և մեթոդաբանական ճիշտ հետազոտության անհրաժեշտության, այլև քննարկվող ոլորտում առկա մեծաքանակ հիմնախնդիրների հաղթահարման գործնական հմտությունների, առաջարկությունների և կիրառության տեսանկյունից, ինչպես նաև իրավաստեղծ գործունեության, իրավակիրառ պրակտիկայի բարելավման գործընթացը երաշխավորելու, իրավագիտակցության և իրավական մշակույթի ձևավորման հիմնախնդիրների պատշաճ լուծման համար համարժեք գիտագործնական բնույթի չափանիշներ մշակելու ու կյանքի կոչելու տեսանկյունից:

Ծանոթանալով Լ. Մինասյանի «Անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի հիմնահարցերը. համեմատական իրավական վերլուծություն» թեմային, հեղինակի գիտական դատողություններին և եզրահանգումներին՝ կարող ենք փաստել, որ նա կարողացել է համապատասխան փաստարկներով հիմնավորել ընտրված թեմայի արդիականությունը և գիտականությունը, ինչպես նաև դրանց շրջանակներում առանձին հարցադրումների հետազոտության հրատապությունը:

Ատենախոսության արդյունքները, եզրակացությունները, դրանում պարունակող սկզբնաղբյուրները, օրենսդրական առաջարկությունները, որոնք հիմնականում առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ, կարող են օգտագործվել «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում: Միաժամանակ, ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել

ընդհանուր տեսական, պատմահիրավական և ուսումնական ծրագրերի, իրավաբանական դասագրքերի, ուսումնամեթոդական ձեռնարկների պատրաստման ժամանակ:

Ընդհանրացնելով վերը նշվածը՝ նկատելի է, որ ատենախոսությունում պատշաճ խորությամբ և բազմակողմանիորեն ուսումնասիրվել և վերլուծվել են առաջադրված հարցերը, արվել են հիմնավորված հետևություններ և առաջարկություններ: Ընդհանուր առմամբ հեղինակը հասել է իր առջև դրված նպատակին, և աշխատանքը համապատասխանում է ներկայացվող պահանջներին:

Ելնելով հետազոտության նպատակից՝ հեղինակն առաջադրել է մի շարք արդիական խնդիրներ և ներկայացրել իր դատողություններն ու եզրահանգումները դրանց վերաբերյալ, որոնք, մեր կարծիքով, բխում են հետազոտության նպատակից և պատշաճ կերպով փաստարկված են:

Ատենախոսության թեման բավականին արդիական և հետաքրքրական է ոչ միայն տեսական, այլև գործնական, սահմանադրահիրավական ներկա զարգացումների գիտական իմաստավորման տեսանկյունից: Մասնավորապես, ուշագրավ են հեղինակի կողմից ներկայացված «անձնական տվյալ», «անձնական տեղեկատվություն», «տեղեկատվություն», «տվյալ» հասկացությունների սահմանումները:

Ատենախոսությունը հիմնականում շարադրված է հստակ լեզվաոճով, բացակայում են խրթին, հակասական մտքերն ու կրկնությունները:

Ատենախոսությունն ունի կուռ տրամաբանական կառուցվածք: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, դրանցում ընդգրկված ութ ենթագլուխներից, եզրափակիչ մասից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Առաջին գլուխը նվիրված է «Անձնական տվյալների պաշտպանության իրավունքի ձևավորման հիմնախնդիրներին», որում հեղինակն անդրադարձել է՝ «Անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի զարգացման պատմական նախադրյալներին՝ «Անձնական կյանքի անձեռնմխելիության ոլորտում», «Անձնական կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքից բխող ինստիտուտների՝ «անձնական տիրույթ» և «անձնական տվյալների պաշտպանության» իրավունքի հարաբերակցություններին, ինչպես նաև «Անձնական տվյալների պաշտպանության իրավունքի՝ որպես սահմանադրական իրավունքի հիմնախնդիրներին:

Ուշագրավ է նաև ատենախոսության երկրորդ գլուխը, որում հեղինակն անդրադառնում է «Անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի հիմնախնդիրների «անձնական տվյալ» հասկացության բովանդակությանը», որտեղ ուսումնասիրվել են ««Անձնական տվյալ» հասկացության առանձնահատկությունները ՀՀ օրենսդրական համակարգում», ««Անձնական տվյալ» հասկացության իրավական կարգավորմանը արտասահմանյան երկրների անձնական տվյալների պաշտպանության իրավունքի համակարգերում», ինչպես նաև

««Անձնական տվյալ» հասկացության բովանդակության առանձնահատկությունները՝ որպես սահմանադրական իրավունքի պաշտպանության օբյեկտ»:

Երրորդ գլուխը նվիրված է ««Անձի անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի երաշխիքներին», որտեղ ուսումնասիրվել են «Անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացումը և սահմանափակումը ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածի համաձայն, ինչպես նաև «Անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի իրականացման սահմանների և սահմանափակումների շրջանակները և սահմանադրական սկզբունքները:

Ատենախոսության հիմնադրույթները համարժեք արտացոլված են ինչպես հեղինակի կողմից ԲՈԿ-ի սահմանած գիտական հանդեսներում հրատարակված 7 գիտական հոդվածներում, այնպես էլ՝ սեղմագրում: Ատենախոսությունում ներկայացված բազմաթիվ եզրահանգումներից պաշտպանության են առաջադրվել միայն նրանք, որոնք հեղինակի կողմից ճանաչվել են առավել արժեքավոր և ուղեկցվել են համապատասխան հիմնավորումներով:

Ատենախոսությունն ինքնուրույն, բավականին բարդ հարցերի վերաբերյալ հիմնավորված եզրահանգումներ պարունակող աշխատանք է: Ցուցանշական են հատկապես հեղինակի կողմից «Անձնական տվյալ» հասկացության մեկնաբանումը ՀՀ օրենսդրական դաշտում և հիշյալ իրավունքի գործունեությանն առնչվող նորմատիվ-իրավական բազայի կատարելագործման վերաբերյալ 38 նորմատիվ իրավական ակտերի առանձնացումը, որոնցում փոփոխություններ և լրացումներ կատարելուց հետո հեռանկարային կարող են լինել «Անձնական տվյալների» պաշտպանության օրենսդրական կարգավորման հարցում:

Ատենախոսության եզրափակիչ մասում հեղինակը բավականին համակարգ-ված է ներկայացրել հիմնական եզրահանգումները, որոնք առավելապես համապատասխանում են աշխատանքում կատարված վերլուծությունների բնույթին ու բովանդակությանը և հիմնականում արտահայտում են գիտական հետազոտության արդյունքները:

Այս ամենով հանդերձ՝ կցանկանայինք նշել, որ աշխատանքը զերծ չէ որոշ թերություններից, որոնց վերաբերյալ անհրաժեշտ ենք համարում ստորև ներկայացնել մի քանի նկատառումներ:

1. Պաշտպանության ներկայացվող գիտական նորույթների շրջանակում «անձնական տիրույթի իրավունք» հասկացության վերաբերյալ ներկայացվել է հեղինակային հետևյալ սահմանումը (կետ 2), ըստ որի՝ այն ընկալվել է որպես անձին հանգիստ թողնելու իրավունք, վերացական և առարկայական տարածք, որն իր մեջ ներառում է տարածքային, սեփական մարմնի, բնավորության, զգացմունքների և արժանապատվության, ընտանեկան կյանքի, ներքին համոզմունքների, տեղեկատվական անձնական տիրույթ ունենալու և մենակ մնալու յուրաքանչյուրի իրավունքը (էջ 12-13, 39-55):

Չնայած այն հանգամանքին, որ նշվածն ունի տեսական նշանակություն, սակայն, կարծում եմ, որ այդ հասկացությունը և՛ բովանդակային նշանակության առումով, և՛ իրավական բնութագրման տեսանկյունից խիստ խնդրահարույց է և

50

հստակեցման կարիք ունի հատկապես մարդու իրավունքի պաշտպանության սահմանադրական երաշխավորման տեսանկյունից:

2. Պաշտպանության ներկայացվող գիտական նորույթի 3-րդ կետում հեղինակն անձնական տվյալների պաշտպանության իրավունքը դիտարկում է որպես սամանադրական իրավունքի առանձին ինքնուրույն ինստիտուտ, (էջ 13, 39-55), սակայն աշխատանքի 1-ին գլխի 1.1 ենթագլխում անդրադառնալով անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի զարգացման պատմական նախադրյալներին՝ այն համարում է ոչ թե անձնական տիրույթի իրավունքի, այլ անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի բաղադրատարր (էջ 19-39):

Կարծում եմ, որ հակասական այս մոտեցումների վերաբերյալ հեղինակի կողմից անհրաժեշտ է լրացուցիչ հիմնավորել՝ անձնական կյանքի անձեռնմխելիության, անձնական տիրույթի և անձնական տիրույթի իրավունքների հարաբերակցությամ համատեքստում:

3. Ատենախոսական աշխատանքի 2-րդ գլխում հեղինակը քննարկման է ներկայացնում «անձանական տվյալ» հասկացության իրավական կարգավորումն արտասահմանյան առանձին երկրների անձնական տվյալների պաշտպանության իրավունքի համակարգերում, որի շրջանակներում անդրադառնում է մի շարք երկրների՝ մասնավորապես Ճապոնիայի, Չինաստանի, Իսրայելի, Արգենտինայի և այլ երկրների փորձին(էջ 78-87): Կարծում եմ, որ անհրաժեշտ է հստակեցնել նման միջազգային փորձի ուսումնասիրության կարևորությունը հատկապես այս երկրների ընտրության տեսանկյունից:

4. Ատենախոսության որոշ էջերում ներկայացված են օտարալեզու արտահայտություններ և այնպիսի հասկացություններ, որոնք հավելյալ հստակեցման կարիք ունեն՝ «habeas corpus» (էջ 61) «sui generis» (էջ 13, 61), «ratione personae, ratione materiae և the de minimis rule» (էջ 13, 66), «քուքիները (cookies)» (էջ 97), կամ «Ֆիզիկական անձանց անձնական տվյալների մշակման և տվյալների ազատ տեղաշարժի պաշտպանության և 95/46/EC Դիրեկտիվը ուժը կորցրած ճանաչելու մասին» Եվրոպական Միության խորհրդարանի և Խորհուրդի կողմից ընդունված 2016/679 կանոնակարգի հապավումը սահմանվել է որպես՝ ՏՊԸԿ (GDPR) (էջ 3) և այլն:

Այնուամենայնիվ, վերը նշված դիտողություններն, ըստ էության, մասնակի բնույթ են կրում և բնավ չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսության դրույթները:

Այսպիսով, Լ. Մինասյանի «Անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի հիմնահարցերը. համեմատական իրավական վերլուծություն» թեմայով ատենախոսությունն իր արդիականությամբ և գիտական մակարդակով համապատասխանում է ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, և հեղինակն արժանի է իր կողմից հայցվող իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ:

Հարգանքով՝ Խաչատուր Եզեքիելյան

Պաշտոնական ընդդիմախոս՝ ի.գ.թ. Վ. Հ. Սայադյան

ի.գ.թ. Վ. Հ. Սայադյանի ստորագրությունը հաստատում եմ
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի
տեղակալ, ինքը և կադրերի ԱՀՏԱ բաժնի պետ,
ոստիկանության գնդապետ Գ. Գ. Մալխասյան

07.10.2021թ.